ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐՅԱՆ
(կենսագրական տվյալներ)

Բարձրագույն կրթությունը ստացել է Եվրոպայում:

Ուսանել է Բեռլինի համալսարանի մաթեմատիկայի, Վիեննայի համալսարանի պատմության և Ցյուրիխի համալսարանի միջազգային օրենսգիտության բաժիններում:

Ուսումնառության տարիներին Բեռլինի համալսարանում արժանացել է Ալեքսանդր Ֆոն Հումբոլդտի, Ցյուրիխի համալսարանում՝ Ֆեզեի կրթաթոշակներին: Տեղափոխվելով Ամերիկայի միացյալ նահանգներ՝ Չիկագոյի համալսարանում շարունակել է ուսումնառությունը սոցիոլոգիայի գծով ու ստացել փիլիսոփայության և սոցիոլոգիայի դոկտորի աստիճան:

Շուրջ քսան տարի դասավանդել է ամերիկյան մի շարք համալսարաններում, միաժամանակ որպես ավագ գիտաշխատող պաշտոնավարել Հարվարդի համալսարանի Միջին արևելքի ուսումնագիտական և Մասաչուսեթսի Տեխնոլոգիական ինստիտուտի Միջազգային ուսումնասիրությունների կենտրոններում: Առանձնին դասախոսություններով հանդես է եկել Բեռլինի, Մյունխենի, Ցյուրիխի, Իտալիայի Պարմա և Տորինո, Շվեդիայի Ուբսալա քաղաքների համալսարաններում:

1991 թ. դասախոսություններով հանդես է եկել Ֆրանկֆուրտի, Քյոլնի, Բոխումի և Մյունստերի, 1993-94 թթ. Հոլանդիայի մի շարք համալսարաններում: 1996 թվականին հրավիրվել է Բրիտանական խորհրդարանի համայնքների պալատ, որտեղ հանդես է եկել Հայոց ցեղասպանության 80-ամյակին նվիրված դասախոսությամբ: Նա այդ պատվին արժանացած առաջին հայ գիտնականն է:

Պրոֆեսոր Վահագն Տատրյանի գիտական հետազոտություններն ընդգրկում են ցեղասպանության հիմնախնդիրները և նվիրված են Հայոց ցեղասպանության

պատմագիտական ուսումնասիրությանը: Դրանք երկու տասնյակից ավելի արժեքավոր մենագրություններ և հարյուրից ավելի հոդվածներ են, որոնք ընթերցողների լայն շրջաններին են ներկայացվել անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, թուրքերեն և հայերեն լեզուներով:

1970-1991 թթ. զբաղեցնելով Նյու-Յորքի համալսարանում սոցիոլոգիայի գծով պրոֆեսորի պաշտոնը՝ Վահագն Տատրյանը մանկավարժական աշխատանքին զուգընթաց շարունակեց իր ուսումնասիրությունները հայոց ցեղասպանության բնագավառում՝ հանդես գալով նոր հարցադրումներով և նորահայտ փաստաթղթերի վերլուծությամբ: Վ.Տատրյանի վերջին շարքանի հրատարակությունները արժանավոր արձագանք են գտել աշխարհի շատ երկրների մամուլի էջերում:

1995 թվականին, Հայոց ցեղասպանության 80-ամյակի առթիվ, Ստամբուլում թուրքերեն, Փարիզում ֆրանսերեն լեզուներով լույս տեսան Վ. Տատրյանի՝ Հայոց ցեղասպանության իրավաբանական վերլուծությանը նվիրված մենագրությունները: Թուրքիայում լույս տեսած աշխատությունը սկզբնական շրջանում դատական հատուկ վճռով արգելվեց, որը սակայն բեկանվեց թուրքական վճռաբեկ դատարանի կողմից:

1995 թվականին ԱՄՆ-ում և Անգլիայում լույս տեսավ Վահագն Տատրյանի «Հայոց ցեղասպանության պատմությունը (էթնիկական ընդհարումները Բալկաններից մինչև Անատոլիա և Կովկաս)» մեծածավալ աշխատությունը, անգլերեն լեզվով: Այն հեղինակի քսան տարվա քրտնաջան գիտական աշխատանքի արդյունքն է, որտեղ նա հիմնականում երկու նպատակ է հետապնդել, նախ՝ Թուրքիայի և Գերմանիայի պաշտոնական ու արխիվային նյութերի հիման վրա ուսումնասիրել ու բացահայտել է Առաջին աշխարհամարտի ժամանակ տեղի ունեցած Հայոց ցեղասպանության փաստերը, ապա՝ պատմագիտական քննական վերլուծության ենթարկել դրանք:

Նույն՝ 1995 թվականին, հայերեն լեզվով, մեկ գրքով լույս տեսան նաև նրա երկու արժեքավոր աշխատությունները՝ «Հայկական ցեղասպանությունը հետպատերազմյան օսմանյան խորհրդարանի մեջ» և «Մի պետության և պետական մի կուսակցության միաձույլ դերը հայ-

կական ցեղասպանության մեջ» խորագրերով:

Բացառիկ արժեք են ներկայացնում վերոհիշյալ աշխատության մեջ հայ, հույն և թուրք երեսփոխանների ու նախարարների ելույթների սղագրությունները, որտեղ ուղղակի հիշատակվում են հայերի տեղահանության և ջարդերի հետ առնչվող ոճրագործության մեղադրանքները, թուրքերի խոստովանություններն ու զղջումի հավաստիքները:

1996 թ. ապրիլին Քեմբրիջում լույս տեսավ Վ. Տատրյանի «Գերմանիայի պատասխանատվությունը հայերի ցեղասպանության համար» ծավալուն աշխատությունը: Աշխատությունն ամբողջովին հիմնված է գերմանական և թուրքական արխիվներից տվյալների վրա:

Վ. Տատրյանի վերջին աշխատությունները կա մի ահազանգ են աշխարհի խոշոր տերություններին՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը, անհամեմատ ավելի նոր հարցադրումներ առաջադրելով քաղաքական ու գիտական շրջանակներին: Վ. Տատրյանի փաստագրությունը մի ավելորդ անգամ հաստատում է այն տեսակետը, որ Գերմանիան դարասկզբին «գլխավոր փորձ» էր կատարել, նախքան կկատարելագործեր իր մեթոդները երկրորդ համաշխարհայինի ժամանակ:

Ներկայումս պրոֆեսոր Վ.Տատրյանն իր աշխատությունների շնորհիվ արտասահմանում ունի մեծ ճանաչում, որպես Հայոց ցեղասպանության բնագավառի ամենանշանավոր հետազոտող: Վ.Տատրյանի հրապարակումների միջոցով Հայոց ցեղասպանությունն այսօր, ավելի քան երբևէ, լայն ճանաչման է արժանացել միջազգային հանրության կողմից:

1998 թ. լույս տեսավ Վ.Տատրյանի «Ցեղասպանության ճանաչումը թուրք-հայկական հակասության ելակետային հիմքն է» նոր աշխատությունը:

1995 թվականին, հաշվի առնելով պրոֆեսոր Վ. Տատրյանի խոշոր ներդրումը պատմագիտության մեջ, Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան նրան շնորհեց Պատվավոր դոկտորի աստիճան:

Ներկայումս Վ.Տատրյանը ԱՄՆ-ում ցեղասպանությունը ուսումնասիրող մի նախագծի տնօրենն է, որը հովանավորում է Հ.Ֆ.Հուգենհայմ հիմնադրամը: